ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 5286-Ա « 26 » դեկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 1778-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի մայիսի 12-ի «Երևանի ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների՝ 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 1778-Ա որոշման 1-ին կետով հաստատված՝ «Ա.Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոց», «Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց», «Ձայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասագիտական դպրոց», «Երևանի Մ. Միրզոյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Ա.Ցիցիկյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Կ.Սարաջյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Ալ. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Տ.Չուխաջյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Ալ. Աճեմյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Ս. Ասլամազյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց», «Երևանի Ռ. Անդրեասյանի անվան երաժշտական դպրոց», «Վիլլի Մոկացյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց», «Երևանի Ստ. Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոց» և «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի «Անուշավան Տեր-Ղևոնդյանի անվան N1 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվների NN 1-30 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1-30 հավելվածների:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի, Երևանի համապատասխան վարչական շրջանների ղեկավարների և սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ